

ՀԱՅ ՀԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԴՐՎԱԾՔԸ
ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ Մ. ԱՔԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏՈՒՄ

Խ. Ս. ՍԱՐԳՍՅԱՆ
Դիտուրյան վաստակավոր գործիչ

Սույն հոդվածում խոսվում է այն մասին, թե ինչ ուղղություններով է ընթանում աշխատանքը գրականության ինստիտուտի հին գրականության բաժնում, տրամաբանական ինչ փոխանցումներ ու կապեր կան այդ ուղղությունների միջև: Այս հարցերը փաստական հիմքի վրա բացահայտելիս՝ ինքնաբերաբար, կպարզվի նաև՝ թե ինչ է կատարված բաժնում և որն է նրա հետանկարը:

*

Ըստ ինքյան հասկանալի է, որ բաժնի գիտա-հետազոտական աշխատանքների ելակետը պետք է հանդիսանա բնագրերի գիտական հրապարակումը: Ոչ միայն այն պատճառով, որ յուրաքանչյուր գրականագիտական, առավելապես հին գրականության վերաբերող՝ աշխատանքի հիմքը կազմում է ճշգրտված բնագիրը, այլև այն, որ հայ բանասիրության ասպարեզում, բացառությամբ պատմագիրների, համեմատաբար քիչ գործ է կատարված այդ ուղղությամբ:

Դեռ անցյալ դարի վերջին ու մեր դարի սկզբին, 1892—1903 թթ., Կ. Կոստանյանը հրապարակել է միջնադարյան մի քանի տաղերգուների բանաստեղծությունների ժողովածուները: Դա, իհարկե, շատ շնորհակալ գործ էր: Հետագայում այդ ուղղությամբ ջանքեր են թափել Ս. Զուպանյանը, Ս. Պոտուրյանը, Ն. Ակինյանը, Տիրայր եպիսկոպոսը և ուրիշներ:

Սակայն, միջնադարյան հայ տաղերգուների վրա սիստեմատիկաբար սկզբնել են աշխատել միայն սովետական շրջանում: Վերջին տասնամյակում ինստիտուտը հրապարակել է տաղերգուների մի ամբողջ մատենաշար. Հովհաննես Երզնկացի (XIII դ.), Կոստանդին Երզնկացի (XIII—XIV դդ.), Խաչատուր Կեչառեցի (XIV դ.), Հովհաննես Թլկուրանցի (XIV—XV դդ.), Մկրտիչ Նաղաշ (XV դ.), Գրիգորիս Աղթամարցի (XVI դ.), Երեմիա Քյոմուրճյան (XVII դ.), Մարտիրոս Ղրիմեցի (XVII դ.), Շամշի Մելքո (XVIII—XIX դդ.): Մատենադարանն իր հերթին հրապարակել է Հովասափ Սեբաստացու (XVI դ.), Նաղաշ Հովնաթանի (XVII դ.), Բաղդասար Դպիրի (XVIII դ.) բանաստեղծությունները: Այդպիսով, մատենաշարը ընդգրկում է գրեթե ամբողջ միջնադարը՝ XIII դարից սկսած մինչև XVIII դարը¹:

¹ Ինստիտուտը մոռացության չի տվել, որ անհրաժեշտ են հատուկ ուսումնասիրություններ: Հովհաննես Սարկավազի և Ֆրիկի մասին:

Այս ժողովածուներում առաջին անգամ միջնադարյան բանաստեղծները տաղերը տրվում են, կարելի է ասել, ամբողջությամբ: Տաղերը մանրակրկիտ ուսումնասիրությամբ հավաքված են Մատենադարանի ձեռագիր, ինչպես նաև այլևայլ գրադարանների տպագիր աղբյուրներից: Դրանց որոշ մասը հրապարակվում է առաջին անգամ: Բնագրերը պատրաստվում են համաձայն բնագրական (տեքստաբանական) հիմնական կանոնների: Տրվում են տարբերակները, մանրամասն նշվում այլ ընթերցումները:

Ժողովածուներն ունեն առաջաբաններ, որոնց մեջ արժարժվում են մի շարք բանասիրական և գրականագիտական խնդիրներ: Ուշադրությամբ քննվում է (իհարկե, կասկած առաջանալու դեպքում) այս կամ այն տաղի հեղինակային պատկանելության խնդիրը, և քիչ չեն կատարված ճշտումները: Գեղարվեստականության հարցերը գրվում են հատուկ տեղ, ուսումնասիրության առարկա է «Սիրո բանաստեղծության պոետիկան միջնադարում» թեման (հեղինակ՝ Վարազ Ներսիսյան): Բնագրական աշխատանքներն ունեն թերություններ, որոնք հետզհետե վերացվում են:

Բայց, իհարկե, բնագրական ամենամեծ աշխատանքը, որ ձեռնարկել է ինստիտուտը, Գրիգոր Նարեկացու «Մատենան ողբերգութեան» քննական բնագրի պատրաստումն է: Մատենադարանում պահպանվում է շուրջ 150 ձեռագիր: «Նարեկն» ունեցել է 53 տպագրություն, գլխավորապես Պոլսում, ապա նաև Վենետիկում: Առաջին տպագրությունը եղել է Ամստերդամում, XVII դարում, վերջինը՝ Բուենոս-Այրեսում, 1953 թվականին: Այս հրատարակությունները դասոցացված և ընտրված են բնագրի պատրաստման համար ամենակարևորները: Դրա վրա ժրջան աշխատում են Ա. Սրապյանը, Մ. Ավդալբեգյանը, Պ. Խաչատրյանը և Ա. Ղազինյանը (վերջին երկուսը պատրաստում են բնագիրը): Առհասարակ, Նարեկացու «Մատենանի» բնագրի պատրաստումը աշխատատար և շատ լուրջ գործ է: Անհետաձգելի խնդիրներից է բնագրական նորմերի մանրամասն մշակումը՝ հիմնված վերջին տարիների ընթացքում ձեռք բերած փորձի վրա: Ավելացնենք, որ ինստիտուտը ձեռնարկել է նաև մեծ բանաստեղծի երկի աշխարհաբար շափածո թարգմանությանը, որը կատարում է Վաղգեն Գևորգյանը:

Բանասիրական և գրականագիտական աշխատանքներում ինստիտուտը, իհարկե, մեծապես հիմնվում է Մ. Աբեղյանի մոնումենտալ աշխատությունների և առաջին հերթին «Հայոց հին գրականության պատմության» երկհատորյակի վրա: Երբեք չեն մոռացվում մեծ գիտնականի հայ գրականագիտության դարագլուխ կազմող աշխարհականացման (վերածնության) և մաքառման տեսությունները:

Զամառոցի մատենաշարի հետ միասին մտահոգության առարկա է արձակի մատենաշարը: Ինստիտուտի հենց առաջին հրատարակությունը եղել է «Էջեր հայ միջնադարյան գեղարվեստական արձակից» գիրքը (խմբագրությամբ Կ. Մելիք-Օհանջանյանի): Հրատարակվել է Նխիթար Գոշի «Առականքը»՝ աշխատասիրությամբ է. Պիվադյանի: Պատրաստվում է Հ. Քենգբյանի աշխատությունը Հովհան Մայրազոմեցու ճառերի մասին, ըստ որում, լուծվել է հեղինակի անհատականության խնդիրը, պարզվել նրան անվերապահորեն պատկանող գործերի հարցը, բացահայտվել նրա ոճի գեղարվեստական արտահայտումները: Նախագծվում են պատրաստել «Շուշանիկ»-ի վարքի բնա-

գիրը, բարոզների, ներբողյանների, տեսիլների, վկայաբանությունների ժողովածուներ:

✱

Խնտիսուտում աշխատանք է կատարվում առանձին մենագրություններ ստեղծելու ուղղությամբ ևս, որոնք, եթե բնագրեր էլ են պարունակում, ապա որպես հավելված: Մենագրությունները վերաբերում են այս կամ այն պորբլեմին կամ անձնավորությանը և ընդգրկում են V-ից մինչև XVIII դարը:

«Հայ գեղարվեստական արձակի սկզբնավորումը (V դար)» — այսպես է կոչվում Մ. Ավդալբեգյանի աշխատությունը, որն ընդգրկում է վարքերի, վկայաբանությունների, պարականոն զրույցների և պատմագիրների մանրամասն վերլուծությունը գեղարվեստական առումով: Պարականոն զրույցների մեջ գեղարվեստականությունն առանձնապես շեշտված է, նրանք անկաշկանդ են դրսևորվում, աշխարհիկ կյանքն ավելի ազատ է ներթափանցում նրանց մեջ: Պատմագիրները ևս զգալի չափով շփման կետեր ունեն գեղարվեստական մտածողության հետ. քաղաքական կյանքից բխած նրանց իդեալը գեղարվեստական որոշակի արտահայտություն է ստանում հերոսների կերպավորումից սկսած մինչև հայ բնականորեն իմաստասիրից օգտագործումն ու լեզվա-ոճական առաջը:

«Միջնադարյան զրույցները» — այս վերնագիրն է կրում Ա. Սրապյանի օրերս լույս տեսած աշխատությունը: Միջնադարյան զրույցների ելակետը, նպատակն ու վերջնակետը մարդն է, նրա գաղափարական, բարոյական կերպարի մաքրումը, ազնվացումն ու բարձրացումը: Սրանից էլ բխում է նրա ոգին՝ դրականը հաստատել, խոտելին մերժել: Զրույցների մեջ անմիջական դրսևորում են գտնում ոչ միայն կրոնական ու աստվածաբանական խնդիրները, եկեղեցական կանոններն ու օրենքները, հոգևոր կյանքը, այլև իրական փոխհարաբերությունները, մարդկային անձնական ու ընդհանրական վարքագիծը, բարքերը, կենցաղը: Աշխատության երկրորդ մասը հատկացված է բնագրերին:

Տպագրվում է Պ. Խաչատրյանի «Հայ միջնադարյան պատմական ողբեր (XIV—XVII դդ.)» հետադոտությունը: Պատմական այս ողբերը քնարական, էպիկական և քնարական-էպիկական նկարագիր ունեն և որպես ստեղծագործություններ ծնունդ են իրականության ու գրողի երազանքի բախման: Նրանց մեջ, գեղագիտական մյուս ըմբռնումներից ավելի, երևան է եկել ողբերգականը: Սակայն հայրենիքի և ժողովրդի ծանր վիճակը չի մղել նրանց հուսահատության. ընդհակառակը, նրանք փափայել են հույսը և մնացել լավատես: Ողբերգականների մերկացումների և բուռն դայրույթի առարկան թշնամին է և ոչ թե սպառնալիքային մարդը: Դա աշխարհայացքի արմատական բեկում էր: Ողբերը պատմա-ճանաչողական մեծ արժեք են ներկայացնում: Այս ուսումնասիրությանը ևս կցված են բնագրեր:

Պատմական ողբերին որոշ չափով հարակցում են պանդխտության երգերը, որոնց մեջ արտահայտվել են աստանդական մարդու կյանքը, նրա հոգսերն ու ապրումները, օտարության մեջ զգեցողի անմխիթար կյանքը: «Միջնադարյան պանդխտության երգեր» աշխատության հեղինակը Մ. Մկրտչյանն է. գիրքըն ունի բնագրերի հավելված:

Տպագրվում է նաև Ա. Ղազինյանի «Առաքել Բաղիշեցի» մենագրությունը, բնագրերի ընդարձակ հավելվածով: Բաղիշեցու ստեղծագործության մեջ արտահայտվել են հայ ժողովրդի ինքնության և նրա մշակութի ինքնուրույնությունը:

թյան պահպանման, ինչպես նաև օտար բռնակալությունից ազատագրման ու պետական անկախության վերականգնման գաղափարները: Ուշագրավ են Բաղիշեցու վկայաբանություններն, ըստ որում նրանց հերոսները նահատակվում են ոչ միայն հավատի համար, այլև հանուն հայրենասիրական և մարդասիրական իդեալների:

Տպագրության է հանձնված, վերջապես, Պարույր Սևակի «Սայաթ-Նուվա» ընդարձակ աշխատությունը: Սևակը մանրամասն վերլուծում է բանաստեղծի խաղերը, նոր, շեղատված երևույթներ դիտում նրանց մեջ, տալիս մեծ «ըզձավորի» համապարփակ նկարագիրը: Հեղինակը քննում է Սայաթ-Նուվայի սիրած կնոջ, Աննայի, ով լինելու խնդիրը ու գալիս որոշ հետևությունների: Աշխատությունն ունի ծանոթագրությունների մեծ բաժին, որտեղ պարզաբանվում են թե՛ մասնակի հարցեր և թե՛ բանավեճ է բացվում սայաթնուլագիտության մի շարք խնդիրների շուրջը:

Միջնագլխի կաֆաների մասին պատրաստվում է հատուկ աշխատություն (հեղինակ՝ Հ. Սիմոնյան), որը կունենա կաֆաների քննական բնագրերի բաժին:

Ինստիտուտում սկսում է գոյանալ նաև հետադուրությունների մի այլ խումբ: Դրանք մենագրություններ են մեր խոշոր հայագետների մասին: Արդեն պատրաստ է Ս. Հարությունյանի ընդարձակ և համակողմանի աշխատությունը Մ. Աբեղյանի մասին: Պ. Հակոբյանը պատրաստում է աշխատություն Գ. Տեր-Մկրտչյանի մասին: Նախագծվում է մենագրություն նաև Գ. Հովսեփյանի մասին:

*

Բնագրերի պատրաստում, ապա մենագրություններ առանձին հարցերի շուրջը—սրանց տրամաբանական զարգացումն են հանդիսանում ուսումնասիրությունները հայ հին գրականության առանձին շրջանների մասին:

«Հայ գրականությունը Կիլիկիայում XII դարում»—այսպես է կոչվում Գր. Հակոբյանի ստվար աշխատությունը: Այդ գրականությունը, հանձին իր երեք գլխավոր դեմքերի՝ Ներսես Շնորհալու և Գրիգոր Տղայի ու Ներսես Լամբրոնացու, որ Շնորհալու շարունակողներն էին, կուռ մի ամբողջություն է ներկայացնում²: Սրանք կարողացան հայ դպրությունը դուրս բերել կրոնական-սխոլաստիկական անձուկ շրջանակներից, իրենց ստեղծագործության նյութը դարձնել ժամանակի հուզող խնդիրները: Այս մատենագիրները քարոզում էին հայրենասիրություն, համերաշխություն, մարդասիրություն, օգտվում ժողովրդական բանահյուսությունից և մշակում այն, քարացած, միապաղաղ թեմաները փոխարինում նոր, աշխարհիկ թեմաներով, որոնց հետ միաժամանակ առաջ էին գալիս գրական նոր տեսակներ (պոեմ, հանելուկ և այլն), պարզունակ տաղաչափության տեղ գալիս էր նոր տաղաչափություն՝ բազմազան ձևերով, գրաբարի տեղ՝ միջին հայերենը: Ներսես Շնորհալու Եդեսիան ողբացող պոեմից հետո Գրիգոր Տղան դրեց Երուսաղեմի կործանմանը նվիրված իր ողբ-պոեմը. իսկ Ներսես Լամբրոնացին ուժեղացրեց արձակի հրապարակախոսական շեշտը,

² Արդեն լույս է տեսել «Ներսես Շնորհալու» մենագրությունը (1964), «Գրիգոր Տղա»-ն հատվածաբար լույս է տեսել ամսագրերում, «Ներսես Լամբրոնացի»-ն խմբագրվում է:

ներառալ պատարագի մեկնության մեջ լսվում է քաղաքական կոչ՝ ամրացնելու եկեղեցու և սրբատեմանության հիմքերը³:

Ինչպես Կիլիկիան XII դարում, այնպես էլ Երզնկան իր տնտեսական-քաղաքական ծաղկման շրջանում, XIII—XIV դդ., դարձել է հայ մշակույթի և գրականության կարևոր կենտրոններից մեկը: Այս դարերում են գործում այնպիսի խոշոր գիտնականներ, որպիսիք են Հովհաննես (Մործորեցի) Երզնկացիները: Նրանք զբաղվում էին փիլիսոփայությամբ, քերականությամբ, տիեզերագիտությամբ, բժշկագիտությամբ և այլ գիտություններով: Բնագիտության ասպարեզում ունեին առաջավոր տեսակետներ, արժարժու էին նյութի պահպանման ուսմունքը: Երզնկացիները ծանոթ էին անտիկ մտածողների գործերին, վկայակոչում էին նրանց, ընդունում կամ մերժում նրանց ասածները, թարգմանում կամ մեկնաբանում նրանց երկերը: Մշակութային այս կենտրոնում ոչ միայն դիստոթյամբ էին զբաղվում, այլև գրում էին բանաստեղծություններ: Սիրո և բնության նվիրած իր անուղղական երգերով մեծ հռչակ է վայելում Կոստանդին Երզնկացին:

Աշխարհականացումը ու նրա աստիճանաբար խորացումը բնորոշ է մեր կյանքի և գրականության համար՝ սկսած XI դարից մինչև XVIII դարը: Սակայն, ինչպես մեր մանրանկարչությունը, օրինաչափորեն զարգանալով, ունեցել է զանազան կենտրոններ և դպրոցներ— Խիզանի, Կիլիկիայի և այլն, այնպես էլ, ըստ երևույթին, գրականությունն է ունեցել ուղղություններ և դպրոցներ: Բավական է համեմատել Կիլիկիայի XII դարի գրականությունը Երզնկայի XIII—XIV դարի գրականության հետ, որպեսզի հավանական թվա նման վարկածը: Մի տեղ, Կիլիկիայում, աշխարհականացման ընդհանուր ֆոնի վրա նկատելի է քնարական-էպիկական ժանրի զերակշռումը, մյուս տեղում՝ Երզնկայում, խոհականի գերակշռումը: Թվում է, կարելի է արդեն խոսել դպրոցների մասին, մասնավորապես Երզնկայի և Կիլիկիայի դպրոցների մասին: Երզնկացիներով զբաղվում է Ա. Սբապյանը:

Հատուկ ուսումնասիրություն է նվիրված հայ բանաստեղծության պատմությանը՝ սկսած XVI դարի կեսերից մինչև XVIII դարի սկիզբը: Հեղինակը Հ. Սահակյանն է: Այս շրջանի սրբգրի, տաղերգուների համեմատությամբ, աչքի է ընկնում նյութի և ապրումի առավել կոնկրետությամբ պատմեցողական կի լավի մտերիմ շեշտով, վայելքի աշխարհիկ-հումանիստական սկզբունքի խորացմամբ: Նոր թեմաներ են առաջ գալիս՝ նվիրված կյանքի առօրեական հարցերին, ժողովրդի կենցաղին ու տնտեսական վիճակին: Այս ժամանակ հանդես եկան Մարտիրոս Խորասարցին, Ներսես Մոկացին, Հակոբ, Թաթոս, Ղազար և Ստեփանոս Թոխաթցիները, Ղազար Սեբաստացին, Ստեփանոս Վարազեցին, Հակոբ Սսեցին, Խաչատուր Խասպեկ, Վարդան և Սիմոն Կաֆացիները, Երեմիա Քյոմուրճյանը, Մարտիրոս Ղրիմեցին, Դավիթ Սալաձորցին, Ստեփանոս Դաշտեցին և ուրիշներ: Սրանք Նաղաշ Հովնաթանի անմիջական նախորդներն են: Սրանցով լցվում է այն բացը, որ ձգվում է Գրիգորիս Աղթամարցուց մինչև Հովնաթանը և որը սխալ կերպով դիտվում էր որպես գրականության անկման ժամանակաշրջան: Առանձին մեծ հատորով պատրաստվում է հիշված բանաստեղծների գործերի քննական բնագրերը:

3 Ի դեպ, մեկնությունների վրա հատուկ ուշադրություն պետք է դարձնել, դրանք հաճախ ժամանակի հասարակական մտքի արտահայտություններ են:

Քննադրեր՝ իրենց առաջաբաններով, հատուկ մենագրություններ, գրականության պատմության առանձին շրջաններ, թվում է, դրանց տրամաբանական վերջավորումը պիտի հանդիսանա հայ հին գրականության պատմությունը: Դա, իհարկե, այդպես է: Մանավանդ, Աբեղյանի մոնումենտալ հատորների լույս տեսնելուց հետո անցել են քսանից ավելի տարիներ: Եվ, այնուամենայնիվ, առայժմ ինստիտուտը չի ձեռնարկում նման մեծ մի գործ ու ոչ միայն այն պատճառով, որ V—X դարերի կապակցությունը քիչ բան է արված, այլև այն, որ հետագա XI—XVIII դարերի վերաբերյալ կատարածը ևս, որքան էլ զգալի լինի այն, տակավին բավարար չէ:

Մ. Աբեղյանի «Հայոց հին գրականության պատմությունը» արդեն երկրորդ անգամ հրատարակվել է (3-րդ և 4-րդ հատորները): «Պատմության» Ա մասը 1948 թ. հրատարակվել է ռուսերեն: Այժմ, թարգմանվում է նաև Բ մասը, ըստ որում, երկու մասերը միասին լույս կտեսնեն մեկ հատորով:

Ինստիտուտը ծրագրում է նաև հրատարակել Ն. Մառի՝ հայ հին գրականության վերաբերող անտիպ մեծ աշխատությունը, որն ընդգրկում է սկզբնական դարերը և կրում է պատմա-բանասիրական բնույթ: Առանձնապես մանրամասն է շարադրված Աստվածաշնչի հայերեն թարգմանության պատմությունը ասորերենից և հունարենից: Հատուկ ուշադրություն է դարձված հեթանոսական տարրի գոյության վրա լեզվի և մշակույթի այլ բնագավառներում՝ քրիստոնեության ընդունումից հետո Հայաստանում:

*

Հայ գրականությունը և, առհասարակ, մշակույթը, ինչպես և ամեն մի ժողովրդի գրականությունն ու մշակույթը, մեկուսացած չեն զարգացել: Այդ առավել վերաբերում է մեզ, որովհետև քիչ աղքատություն ունի, որ իր պատմության ընթացքում այնքան շփվեր, այնքան շատ և բարդ հարաբերությունների մեջ մտած լիներ այլ՝ հարևան և ոչ հարևան ժողովուրդների հետ, ինչպես հայ ժողովուրդը: Այսու, գրական և ընդհանրապես մշակութային առնչությունների հայտաբերումը ու նրանց ուսումնասիրությունը առաջնակարգ խնդիր է հայագիտության համար: Առանց դրան թերի կլինի մեր հոգևոր կյանքի պատմության շարադրանքը: Դա հին ճշմարտություն է, որ այսօր համառոտ կրկնում ենք:

Դրական-մշակութային առնչություններն իրականացվել են գերազանցություն թարգմանությունների միջոցով: Թարգմանությունները կատարվել են ըստ տեղական պահանջի, հայ մշակույթի ու կրթական մտքի առաջադրած խնդիրներին և շահագրգռություններին համապատասխան: Դրանով իսկ միջնադարյան թարգմանական գրականությունը հայ մատենագիտության բաղկացուցիչ մասն է: Թարգմանությունները կրում են տեղայնության բնույթ, սկսում են գիտակցվել իբրև բուն հայկական երևույթ:

Ասորերենից, հունարենից, պարսկերենից, վրացերենից և այլ լեզուներից թարգմանված երկերը հավաստի կուլան են տվյալ հուշարձանների սկզբնական տեսքը վերականգնելու գործում: Նրանք զերծ են այն փոփոխում-ընդմիջարկություններից, որ հետագայում կրել է երկի բնագիրը: «Հայ-իրանական գրական առնչություններ (V—XVIII դդ.)» աշխատության մեջ (1963), օրինակ, Բ. Զուգասզյանը պարզում է, որ Մովսես Խորենացու և Գրիգոր Մագիստրոսի մոտ պահպանվել են իրանական էպիկական զրույցների այնպիսի տարբերակ-

ներ, որոնք չեն օգտագործվել Ֆիրդուսու «Շահ-Նամե»-ում: Կամ նույն հեղինակը իր «Խրատք նուշիրվանի» (1966) ուսումնասիրության մեջ զետեղված այդ խրատների լրիվ լրագրերի համագրությամբ ապացուցում է, որ դրանց հայերեն թարգմանությունը կարող է հաստատուն հիմք հանդիսանալ վերականգնելու պարսկական լրիվ տարբերակներից մեկի բնագիրը:

Երբեմն այս կամ այն երկը պահպանվել է միայն հայերեն թարգմանությամբ: Այդպիսին են Թեոն Աղեքսանդրացու, Եվսեբիոս Կեսարացու և ուրիշների զործերը: Ակնհայտ է, որ անսահմանորեն մեծանում է նման թարգմանությունների պատմա-բանասիրական նշանակությունը:

Հատուկ ուշադրության են արժանի և բացառիկ նշանակություն ունեն հայերենից հունարեն, վրացերեն, լեհերեն և այլ լեզուների թարգմանված հուշարձանները, որոնք երբեմն պահպանել են հայ խմբագրությունից տարբերվող պատում (Աղաթանգեղոս, Վարքեր և վկայաբանություններ): Սրանք կազմում են արդեն առանձին ինքնուրույն մի խումբ:

Հին և միջին դարերի հայ թարգմանական գրականությունը, իսկապես, մի ծով է: Առաջին անգամ նրա համառոտ նկարագրությունը տվել է Ս. Սոմալյանը 40 էջից բաղկացած իր «Պատկեր նախնական թարգմանությանց ի հայրաբառ» աշխատության մեջ, որը եվրոպական երկրներում առաջացրել է բանասիրական մեծ հետաքրքրություն: «Մանավանդ,— ասում է Գ. Զարբանալյանը իր «Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց» գրքի մեջ,— հետզհետե իրենց լեզուներով հրատարակեցան Եվսեբիայ ժամանակականաց, Փիլոնի ճառից, Արիստիդայ փիլիսոփայի հատվածոց, Սեբերիանոսի, Ոսկեբերան հայրապետի ... և ուրիշ ասոնց նման կորուսյալ երկաց թարգմանությունք» (էջ ԺԴ—ԺԶ):

Հետագայում, 1889 թ. վեներտիկում լույս տեսավ Գ. Զարբանալյանի վերը հիշած ստվար (783 էջ) աշխատությունը: Մեծարժեք մի գործ է դա՝ պատրաստած բացառիկ հմտությամբ: Շուրջ հարյուր հիսուն հեղինակ է ընդգրկում այդ հատորը, ըստ որում յուրաքանչյուր հեղինակի թարգմանված գործերը թվարկվում են ու հաճախ—համառոտ կամ ընդարձակ—ծանոթագրվում: Նման գործերի ընդհանուր թիվը հասնում է յոթ-ութ հարյուրի:

Զարբանալյանի աշխատության արձագանքը Եվրոպայում նույնպես ուժեղ էր: «Ասորադետք,— ասում է ինքը Զարբանալյանը,— բնագիրն ու հայ թարգմանությունը իրարու հետ բաղդատած ատեննին, հաճախ ընտրելագույն և իմաստից ավելի պատկանավոր կգտնեին զմերն, և բազմաթիվ օրինակներով կհավատարմացնեին զայս» (էջ 34)⁴:

Զարբանալյանի հատորը պարունակում է սոսկ IV—XIII դարերում կատարած թարգմանությունները: Հեղինակի ժամանակ, այսինքն՝ անցյալ դարի 60-ական թվականներին, իր իսկ ասելով, հայկական հայտնի ձեռագրերի ընդհանուր քանակը 10.000-ից չէր անցնում, իսկ ձեռագրերի ցուցակ գոյություն ուներ միայն Կարենյանին: Եթե նկատի առնենք, որ այսօր 20.000-ից ավելի

4 Ի դեպ, Զարբանալյանն ասում է, որ զնոստիկներից ևս եղել են թարգմանություններ,— շուրջ 80, ըստ երևույթին, կորած,— որոնց վերնագրերն անգամ հետաքրքրություն են արթնացնում. «Աղամայ կտակն», «Հիսն օրհնութեան», «Գորտուակն», «Կիրակոսակն», «Մանկութեան աւետարան» ևն: Թերևս մտադիր մի հետազոտող մեր բազմահազար ձեռագրերի որևէ մեկի թաքնված անկյունում կամ պահպանակներում կարողանա գտնել այդ գործերից որևէ մեկի հետքը:

ձեռագիր ունենք, որ բաղմամբիլ հավաքածուներ արդեն ունեն իրենց ցուցակները և որ XIII դարից հետո անցել է յոթ դար, պարզ կլինի, թե որքան դեռ կան անհայտ, չցուցակագրված ու չհավաքագրված թարգմանական գործեր. հավանորեն՝ հարյուրներով: Ակնհայտ է, որ դիտնականի այդ աշխատությունը շարունակելը անհետաձգելի գործ է հայագիտության համար:

Ունիտորները XIV—XVI դարերի ընթացքում հարյուրավոր մեծ ու փոքր աշխատություններ են թարգմանել լատիներենից Քոնսյում, Երնջակում, Ապարաններում, Սիսում, Հոռմում և այլ բաղմամբիլ վայրերում: Այս թարգմանությունների ցուցակը հրատարակվել է 1960 թ. Բերնում «Linguae haical scriptores» վերնագրով: Պարունակում է 583 անուն: Թարգմանված երկերի հայերեն վերնագրերին նախորդում են լատիներեն վերնագրերը: Հատորն ունի հարուստ index—անունների և այլ սլարագանների:

Ջարբհանալյանի աշխատությունը Մառը շատ բարձր էր գնահատում և անվանում էր այն настольная книга: Սա պատահական երևույթ չէ: Մառը այն մեծ գիտնականն էր, որ հսկայական չափերով բարձրացրեց թարգմանական գրականության ուսումնասիրության նշանակությունը, ժողովուրդների մշակութային կյանքի միասնությունը, սերտ ընդհանրությունը, հաղարավոր թելերով իրար հետ կապված լինելը, նրանց «համերաշխությունը» («солидарность»—ինչպես մի տեղ արտահայտվում է Մառը) ու միաժամանակ առանձնահատկությունները հայտնաբերելու գործում: Արդեն այդպիսի հայտնաբերումների մի մեծ կոմպլեքս էր նրա նշանավոր մենագրությունը Վարդանի առակների մասին, առակներ, որոնք մտան վրացիների, արաբների և Հեռավոր Արևմուտքի առօրյա կենցաղի մեջ: Հետադաշտ Սառի տեսությունը բյուրեղացավ որպես հայ-վրացական բանասիրություն: Այդ տեսության զարգացման վերջին փուլն էր կովկասագիտությունը, որ սահմանված էր պարզելու Կովկասի բաղմալեզու, բաղմակրոն ու բաղմասլիսի ճակատագիր ունեցող ժողովուրդների փոխհարաբերությունները, նրանց դարավոր շփման և առնչությունների բաղպատկեր նկարագիրը, որն իրացվել է համեմատաբար փոքր, հետևապես բարդություններ ու խճողումներ առաջացնող տարածության վրա. դրանով էլ հենց բացատրվում է այդ գիտության հետ կապված դժվարությունները:

Հայ-վրացական բանասիրության գծով տպագրվել է Պ. Մուրադյանի երկու աշխատությունը. «Հայ-վրացական մատենագրական փոխհարաբերությունները XVIII դարում» (1966, Խուսերեն), որտեղ դրանք մանրամասն հետադոտվում են գեղարվեստական, լեզվաբանական, պատմական, փիլիսոփայական և իրավագիտական գրականությունների ասույարեղում և «Սայաթ-Նովան ըստ վրացական աղբյուրների» (1963): Նույն գծով տպագրվել են նաև հեղինակի մի շարք հոդվածները—Արրահամ կաթողիկոսի III թուղթը վրաց կաթողիկոս Կիրիոնին (VI դար), ուր քննվում են բնագրային և հայ-վրացական փոխհարաբերություններին վերաբերող մի քանի հարցեր. Գրիգոր Բակուրյանի «Սահմանքի» հունարեն, վրացերեն և հայերեն բնագրերի, ինչպես նաև հեղինակի աղգային ուսականության հարցերը. Ջվարի տաճարի հայկական արձանագրության մանրակրկիտ ուսումնասիրությունը. հայ-վրացական բանասիրության սկզբնավորումը: Պատրաստ է «Վրացերեն արձանագրությունները Հայաստանում» աշխատությունը, որ նվիրված է քաղկեդոնական կրթօջախների պատմությանը Հայաստանում: Այս աշխատության մեջ մատենագրական տեղեկությունները համադրված են վիմագիր աղբյուրների հետ (գերազանցորեն վրա-

ցերին), բացահայտվում է հայ քաղկեղոնականների մատենագրական և քաղաքական գործունեությունը՝ հունական և վրացական իրականության նկատմամբ:

*

Խոսելով թարգմանական գրականության մասին, տեսանք, թե որքան այն, լինելով անհունորին հարուստ, ի վիճակի է լուծելու հայ մատենագրության վերաբերող բազմաթիվ հարցեր: Հատուկ ուշադրություն պետք է դարձնել դրա վրա: Թարգմանական գրականությունը մի շտեմարան է, աղնիվ մետաղների և թանկարժեք քարերի մի պանծարան, որ դարերի ընթացքում լույս է ամբարել իր մեջ և այսօր պատրաստ է ճառագել երկյուղածությամբ և հմտությամբ իրեն մոտեցողներին: Այսու հարկավոր է, որ մենք ունենանք (դրանք կան, իհարկե, բայց քիչ են), կուտակենք նման մարդիկ: Բայց դրանք երկնքից չեն իջնում, այլ պատրաստվում են տոկուն աշխատանքով: Հարկավոր է զինել հայագիտությամբ զբաղվող երիտասարդությանը բազմակողմանի իմացությամբ: Դրա համար բավարար չէ տարեկան մեկ-երկու ասպիրանտուր: Դա, վերջ ի վերջո, կհամիջոց է:

Անհրաժեշտ է կրկնապատկել, եռապատկել, քառապատկել այդ թիվը: Մեզ հարկավոր են լավ մասնագետներ՝ առաջին հերթին դասական բանասիրության, ապա տոմարագիտության, եբրայագիտության, իրանագիտության, արաբագիտության, սլավոնագիտության, թուրքագիտության, վրացագիտության գծերով: Այս դեպքում միայն հինգ-տասը տարուց հետո մենք կունենանք գիտնականների մի ստվար խումբ, որ ի վիճակի կլինի ըստ ամենայնի, համակողմանի ուսումնասիրելու մեր գրականությունը, պատասխանելու բազմաթիվ հարցերի, որ կյանքը առաջադրել է մեզ: Պատմությունը մեր ուսերի վրա է դրել ծանրագույն, բայց և աղնիվ մի բեռ, դա մեր լայնածավալ մատենագիտությունն է: Կորսանք, բայց երբեք չընկճվենք այդ բեռի տակ, ընդհակառակն, բաց ճակատով առաջ դնանք ու վերացնենք այն հակասությունը, որ վաղուց դիտել է արևելագետ Վ. Միլլերը. «Աղաղակող հակասություն գոյություն ունի հետադոգողների թվի ու գիտական խնդիրների քանակի միջև»: Շարունակենք մեր աշխատանքը տեքստերի հավաքման ու նրանց հետադոգման գծով, գրականության պատմության ասպարեզում նորանոր երևույթներ հայտաբերենք և ուսումնասիրենք այն, բայց երբեք չմոռանանք, որ մեր նեղ, ետ մնացած տեղը թարգմանական գրականությունն է, որի համար և անհրաժեշտ են կադրեր, նորից կադրեր ու այն էլ ոչ թե անհատաբար, այլ մասսայաբար: